Արձանագրություն N 3
«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կարիքների համար «ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-2025/20» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան «29» սեպտեմբերի 2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Հայկ Պարոնյան

Գնահատող անդամներ՝ Վահե Հարությունյան
Տիգրան Ասլիկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Փառանձեմ Խաչատրյան

Օրակարգ

1. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին:
2. «ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-2025/20» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:
3. Հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

1.1 Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին

(Փ. Խաչատրյան)

1.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. **Տե՛ս Հավելված N 1:**

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	«Յունիտեք» ՍՊԸ	570,000	448,000 AMD	20%	537,600 AMD
1	2	«Ալֆա- Էտալոն» ՍՊԸ	570,000	455,750 AMD	20%	546,900 AMD

2. «ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-2025/20» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:

(Փ. Խաչատրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների **e-auction (www.auction.am)** համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ ներքոհիշյալ դեպքի.

«Յունիտեք» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում հավելված 1.1 կետով սահմանված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրում անհրաժեշտություն է առաջացել շտկել առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի տվյալները մանրամասն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց «Յունիտեք» ՍՊ ընկերությանը ուղարկել արձանագրված շտկման ծանուցումը /25.09.2025թ./:

Ծանուցումը ստանալու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում «Յունիտեք» ՍՊ ընկերությունը շտկված տարբերակը ուղարկել է էլեկտրոնային գնումների (e-auctiom) համակարգի միջոցով:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-2025/20» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. Հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Փ. Խաչատրյան)

3.1 29.09.2025թ.-ին հայտերի գնահատման նիստի ավարտի օրը, **e-auction (www.auction.am)** էլեկտրոնային գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝

«ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-2025/20» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված, հայտ ներկայացրած

- «Յունիտեք» ՍՊԸ-ին ճանաչել ընթացակարգի ընտրված մասնակից

3.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել՝ «ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-2025/20» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

3.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը՝ անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

3.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի հաստատված տարբերակը կցել համակարգ, և կից գրությամբ փաստաթղթային տարբերակով ներկայացնել որակավորման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր), պայմանագրի կատարման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

(Փ. Խաչատրյան)

4.1 «ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-2025/20» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի շենքում, ք. Երևան, Իսահակյան 36 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ Հ. Պարոնյան

Անդամներ՝ Վ. Հարությունյան

Տ. Ալիկյան

Քարտուղար՝ Փ. Խաչատրյան